Новая универсальная комбинированная система подземной разработки подэтажными штреками со щелевой выемкой и с отбойкой шпурами из восстающих позволяет обеспечить безопасность ведения подземных горных работ и высокие качественно-количественные показатели добычи руды при любой степени устойчивости породно-рудного массива.

Ключевые слова: золото, устойчивость, руда, порода, жила, система разработки, эксплуатация.

Введение. Одно из золоторудных месторождений на юге Армении расположено в отдаленном, труднодоступном районе (вдали от населенных пунктов и промышленных центров), в горной местности [1].

Рудные тела рассматриваемого месторождения отличаются сложной морфологией и условиями залегания, характеризуются раздувами и пережимами, смещениями участков жил по простиранию и сближенным расположением некоторых жил.

Примерно 70% запасов руды на рассматриваемом месторождении сосредоточены в крутопадающих рудных телах или на их отдельных частях мощностью до 0,7 м, а около 30% - мощностью от 0,7 до 1,0 м.

Согласно данным геологоразведочных и эксплуатационных работ, месторождение характеризуется прерывистостью оруденения по простиранию; достаточной крепостью руды и вмещающих пород (коэффициент крепости

пород по шкале проф. И.М. Протодяконова - 8...12, а для рудных образований – 12...14); устойчивостью руды, за исключением в контактах и в зонах жильных внедрений; устойчивостью вмещающих пород, за исключением в контактах рудных тел, где они местами трещиноваты и недостаточно устойчивы; неслеживаемостью руды.

Гидрогеологические условия весьма благоприятные.

Постановка задачи и методы исследования. В работе [2] способом прямого отбора выделены технически применяемые 7 систем подземной разработки, которые для горногеологических и горнотехнических условий данного месторождения обеспечивают безопасность горных работ и возможность осуществления производственных процессов при очистной выемке руды. Причем из отобранных систем разработки 4 применимы для крутопадающих рудных тел, представленных устойчивой рудой и вмещающими породами, а 3 – для крутопадающих рудных тел, представленных неустойчивой рудой и вмещающими породами.

На основе выбора оптимальных систем с использованием оценочного показателя “критическая мощность” рудного тела установлено [3], что для весьма тонких и тонких рудных тел (мощностью до 1,0 м), представленных устойчивым породно-рудным массивом, оптимальной является система разработки подэтажными штреками со щелевой выемкой руды (рис. 1), а для рудных тел с той же мощностью, представленных неустойчивым породно-рудным массивом, – система разработки с magazинированием руды с отбойкой шпурами из восстающих (рис. 2).




Рис. 1. Система разработки подэтажными штреками со щелевой выемкой руды:
1 - откаточный штрек; 2 - вентиляционный штрек; 3 - блоковый восстающий;
4 - подэтажные штреки; 5 - первичная цель; 6 - вторичная цель

объем подготовительно-нарезных работ, а при снижении устойчивости породно-рудного массива - повышение количества подэтажных штреков. Следовательно, изыскание эффективных методов выемки руды по вышеотмеченной системе разработки при неустойчивом породно-рудном массиве имеет важное практическое значение. В этой связи заслуживает внимания способ отбойки руды из восстающих.

Желаемого результата можно достичь комбинированием системы подэтажными штреками со щелевой выемкой руды и системы с magazинированием руды с отбойкой шпурами из восстающих, что позволит произвести выемку руды в условиях, изменяющих устойчивость породно-рудного массива.

Результаты исследования. С этой целью была разработана рабочая гипотеза по созданию универсальной системы подземной разработки, сущность которой заключается в следующем (рис. 3).




Рис. 3. Комбинированная система разработки подэтажными штреками со щелевой выемкой руды и с отбойкой шпурами из восстающих

Эксплуатационный блок подготавливается откаточным 1 и вентиляционным 2 штреками, а также блоковым восстающим 3.

Нарезные работы включают проведение подэтажных штреков 4 и коротких восстающих 5, с помощью которых эксплуатационный блок разделяется на отдельные выемочные участки высотой в 7 м и длиной, по техническим возможностям, минимум в 5 м. Длина выемочного участка зависит от устойчивости породно-рудного массива, которая предопределяется при прослеживании рудного тела во время проходки подэтажных штреков. В случае

выявления неустойчивости породно-рудного массива выделяется участок, длина по простираанию которого равна кратной величине 5 м.

После завершения подготовительно-нарезных работ приступают к очистной выемке руды из участков:

- на участках с устойчивым породно-рудным массивом отработка рудного тела осуществляется слоями. В результате отбойки первого слоя высотой в 2,0 м в подэтаже создается первичная щель трапециевидной формы, которая снизу имеет - 0,8...0,9 м, а сверху - $m+0,2$ м ширины. Отбитая руда магазинируется на почву подэтажного штрека, которая служит опорой для бурения второго слоя. Вследствие выемки этого слоя создается узкая вторичная щель высотой 3,0 м и шириной $m+0,2$ м. Отбитая руда по подэтажному штреку скреперируется в рудоспускное отделение восстающего;

- на участках с неустойчивым породно-рудным массивом отработка рудного тела осуществляется сплошным забоем по восстающему с отбойкой руды горизонтальными слоями. Горизонтальные шпуровые глубины 2,2 м предусмотрено располагать в шахматном порядке. После взрывания комплекта шпуров производится частичный выпуск отбитой руды с тем расчетом, чтобы между кровлей очистного забоя и поверхностью замагазинированной руды оставалось свободное пространство высотой около 1,0 м. Затем отбитая руда по подэтажному штреку скреперируется в рудоспускное отделение восстающего.

Заключение. Таким образом, для отработки весьма тонких и тонких крутопадающих рудных тел или отдельных их частей, представленных как устойчивым, так и неустойчивым породно-рудными массивами, создана новая система разработки, которая является комбинацией системы разработки подэтажными штреками со щелевой выемкой руды (при устойчивом породно-рудном массиве) и системы разработки с магазинированием руды с отбойкой шпурами из восстающих (при неустойчивом породно-рудном массиве).

Новая универсальная комбинированная система разработки подэтажными штреками со щелевой выемкой и с отбойкой шпурами из восстающих позволяет обеспечить безопасность ведения подземных горных работ и высокие качественно-количественные показатели добычи руды при любой степени устойчивости породно-рудного массива.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Оганесян А.Г., Агабян А.Ю., Маилян Л.С. Обоснование совмещения во времени геолого-разведочных и эксплуатационных работ на золоторудном месторождении // Вестник НПУА: Metallургия, материаловедение, недропользование. – Ереван, 2019. – №1. – С. 84-93.

2. **Маилян Л.С.** Отбор технически применяемых систем подземной разработки весьма тонких и тонких крутопадающих рудных тел // Вестник НПУА: Metallurgy, материаловедение, недропользование. – Ереван, 2020. – N2. – С. 80-91.
3. **Հովհաննիսյան Ա.Հ., Մախիյան Լ.Ս.** Չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքային մարմինների ստորգետնյա մշակման օպտիմալ համակարգերի ընտրությունը // ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր. Տեխ. գիտ. սերիա. - 2020. – Հ. LXXIII, N4. – էջ 384–393:
4. **Агабалян Ю.А., Наджарян А.М., Оганесян А.Г.** Повышение эффективности разработки крутопадающих рудных месторождений // Промышленность, строительство и архитектура Армении. – 1988. - N9. – С. 21–23.

Национальный политехнический университет Армении. Материал поступил в редакцию 16.05.2021.

Ա.Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լ.Ս. ՄԱԽԻՅԱՆ

**ԵՆԹԱՀԱՐԿԱՅԻՆ ՇՏՐԵԿՆԵՐՈՎ ՃԵՂՔԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹՈՎ ԵՎ
ՎԵՐՇՆԱՅԻՆ ՊԱՅԹԱՆՑՔԱՅԻՆ ՊՈԿՄԱՄԱԲ ԵՎ ՀԱՄԱՊԻՏԱՆԻ
ՀԱՄԱԿՑՎԱԾ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Մշակման համակարգերի զարգացման, կատարելագործման և նորերի ստեղծման սկզբունքների հիման վրա մշակվել է ինչպես կայուն, այնպես էլ անկայուն ապարահանքաքարային զանգվածով ներկայացված չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքային մարմինների կամ դրանց առանձին մասերի շահագործման համապիտանի մշակման համակարգի ստեղծման աշխատանքային վարկած, որը ենթահարկային շտրեկներով ձեռքային հանույթով (կայուն ապարահանքաքարային զանգվածի դեպքում) և վերընթացներից պայթանցքային պոկմամբ ու պահեստավորմամբ (անկայուն ապարահանքաքարային զանգվածի դեպքում) մշակման համակարգերի համակցում է:

Ենթահարկային շտրեկներով ձեռքային հանույթով և վերընթացներից պայթանցքային պոկմամբ նոր համապիտանի համակցված մշակման համակարգը թույլ է տալիս ցանկացած ապարահանքաքարային զանգվածի կայունության աստիճանի դեպքում ապահովել ստորգետնյա լեռնային աշխատանքների կատարման անվտանգություն և հանքաքարի արդյունահանման բարձր որակաքանակական ցուցանիշներ:

Առանցքային բառեր. ոսկի, կայունություն, հանքաքար, ապար, երակ, մշակման համակարգ, շահագործում:

A.H. HOVHANNISYAN, L.S. MAILYAN

**A NEW UNIVERSAL COMBINED SYSTEM OF UNDERGROUND
MINING WITH SUB-STOREY DRIFTS WITH A SLOTTED RECESS AND
WITH REBOUNTING HOLES MADE OF RISING STONES**

On the basis of the principles of development, improvement and creation of new systems, a working hypothesis is developed for the creation of a universal system of underground mining for the development of very thin and thin steeply dipping ore bodies or their individual parts, presented by both stable and unstable rock-ore massif, which is a combination of the system development by sublevel drifts with slotted ore excavation (in case of stable rock-ore massif) and development systems with ore shrinkage with bore holes from rising holes (in case of unstable rock-ore massif).

The new universal combined system for the development of sublevel drifts with slotted excavation and with boreholes from rising holes allows to ensure the safety of the introduction of underground mining and high qualitative and quantitative indicators of ore extraction at any degree of stability of the natural ore massif.

Keywords: gold, stability, ore, rock, vein, development system, exploitation.

Գ.Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԲԱՑԱՀԱՆՔԵՐՈՒՄ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՊԱՅԹԵՑՄԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Բացահանքերում զանգվածային պայթեցման աշխատանքների արդյունավետությունը բնութագրվում է արտաչափս կտորների ելքով, հանքաստիճանի մշակված հիմքով և պայթեցված լեռնային զանգվածի փլվածքի պարամետրերով և պայթեցման սահմանգծից դուրս լեռնային զանգվածի ստրուկտուրային խախտման չափերով: Զանգվածային պայթեցման դեպքում պայթեցվող բլոկի սահմանգծից դուրս միշտ խախտվում է լեռնային զանգվածի բնական ստրուկտուրան, որը հանդիսանում է արտաչափս կտորների ելքի օջախ, բացասաբար է ազդում հանքաստիճանի թեքության կայունության վրա, ինչպես նաև դժվարացնում է պայթեցված զանգվածի պարամետրերի կարգավորումը:

Աշխատանքը նվիրված է պայթեցվող բլոկի սահմանագծից դուրս լեռնային ապարների ճեղքառաջացման գոտու և զանգվածից ապարի անջատման գոտու շառավղի սահմանափակմամբ պայթեցման աշխատանքների արդյունավետ մեթոդի մշակմանը: Մշակվել է հանքաստիճանի պայթեցման նոր համալիր եղանակ՝ հորատանցքի մեծ տրամագծով և դետոնացման մեծ արագությամբ օժտված պայթուցիկ նյութի լիցքի և գծային լիցքի պայթեցմամբ: Առաջարկված պայթեցման մեթոդը թույլ է տալիս նվազեցնել ճեղքառաջացման գոտու և զանգվածից ապարի անջատման գոտու շառավիղները, հետևաբար և ապահովել հանքաստիճանի թեքման կայունությունը, ինչպես նաև ստանալ հանքաստիճանի հարթ մակերևույթ, որը բացառում է արտաչափս կտորի ելքը և ստեղծում է հնարավորություն՝ ստանալու պայթեցված զանգվածի փլվածք՝ տրված պարամետրերով:

Առանցքային բառեր. հանքաստիճան, պայթեցված զանգված, ճեղքառաջացման գոտի, մերկացված մակերևույթ, պայթուցիկ նյութի լիցք:

Ներածություն: Լեռնային աշխատանքների զարգացման առաջնային խնդիրը ընդերքից արդյունահանվող օգտակար հանածոյի ծավալների մեծացումն է: Այն պայմանավորված է ժայռային և կիսաժայռային ապարները հանույթի նախապատրաստելու գործընթացի արդյունավետությամբ: Բացահանքերում պինդ ապարների նախապատրաստումը հանույթի իրականացվում է պայթեցման էներգիայի կիրառմամբ:

Աշխարհում ընդերքից կորզվող պինդ օգտակար հանածոյի և այն պարփակող դատարկ ապարների ծավալի 70...80%-ը արդյունահանվում է զանգվածային պայթեցմամբ: Ուստի բացահանքերում իրականացվող զանգվածային պայթեցում-

ները հանդիսանում են ապարները հանույթի նախապատրաստելու սկզբնական գործընթաց, որից և կախված է մյուս լեռնային գործընթացների արդյունավետությունը:

Բաց լեռնային աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների արդյունավետության բարձրացումը, կապված պայթեցման էներգիայի կարգավորման հետ, պահանջում է լուծել երկու կարևորագույն խնդիր.

1. Բացահանքի աշխատանքային հրապարակում ունենալ անհրաժեշտ մանրացվածությամբ պայթեցված լեռնային զանգված:

2. Ապահովել հանքաստիճանի ազատ մակերևույթի թեքության կայունությունը և ունենալ հանքաստիճանի մերկացված հարթ մակերևույթ:

Պայթեցման աշխատանքների երկարատև փորձը վկայում է, որ մոնոլիտ միջավայրում պայթուցիկ նյութի (ՊՆ) լիցքի քանակի փոփոխությունը, որը բնորոշվում է հորատանցքային ցանցի պարամետրերի և ՊՆ-ի լիցքի երկարության փոփոխությամբ, թույլ է տալիս լայն սահմաններում փոփոխել ապարի մանրացվածության աստիճանը: Իսկ ճեղքավորված միջավայրում ՊՆ լիցքի քանակի մեծությունը չի կարող հանդիսանալ ապարի մանրացվածության աստիճանի կարգավորման լիարժեք ցուցանիշ, քանի որ պայթեցման հիմնական էներգակիրը հանդիսանում է զանգվածի ճեղքավորվածության աստիճանը, և կախված վերջինիս ինտենսիվությունից՝ կտրուկ նվազում է ապարի մանրացվածության աստիճանը:

Ճեղքավորված միջավայրում ապարի կարգավորված մանրացման վրա ծախսվող պայթեցման էներգիան խիստ սահմանափակ է: Այս առումով մի շարք հեղինակներ [1,2] գտնում են, որ ճեղքավորված միջավայրում անհրաժեշտ է կիրառել բարձր փշրողականությամբ (դետոնացման մեծ արագությամբ) օժտված ՊՆ, որի դեպքում մեծանում է ապարի կարգավորված մանրացման գոտու շառավիղը՝ ի հաշիվ գազագոյացման արգասիքի սկզբնական ճնշման մեծացման:


Սակայն այս դեպքում ՊՆ-ի ակտիվ գործունեության տևողությունը ակնթարթային է, որը կմեծացնի ճեղքառաջացման և պոկման գոտու սահմանները (ապարները զանգվածից բնական ճեղքերով անջատման սահմանները), իհարկե, պայթեցումից հետո առաջացնելով թեք անհարթ մակերևույթով (ելուստներով) հանքաստիճան, որը հաջորդ պայթեցման համար կհանդիսանա արտաչափս կտորների ելքի օջախ [1]:

Փոքր դետոնացման արագությամբ օժտված ՊՆ-ի կիրառման դեպքում մեծանում է պայթեցման ակտիվ գործունեության տևողությունը ապարի մանրացման վրա, որն ապահովում է կարգավորված մանրացման գոտու փոքր շառավղով պայթեցված զանգված և ճեղքառաջացում, պոկման գոտու փոքր սահմաններ [2]: Սակայն ապարի կարգավորված մանրացման գոտու փոքր շառավղի դեպքում անհրաժեշտ է ունենալ համեմատաբար խիտ հորատանցքային ցանցով պայթեցվող բլոկ, որը կհանգեցնի հորատման գերածախսի:

Հանքաստիճանի շեղի հարթ մակերևույթի ստեղծման և թեքության կայունության ապահովման ներկայիս միակ մեթոդը զանգվածային պայթեցման հետ մեկտեղ իրականացվող եզրագծային պայթեցումն է [3]: Այս մեթոդը բավականին աշխատատար և ծախսատար գործընթաց է:

Հետևաբար, զանգվածային պայթեցման գործունեության կարգավորման նոր տեխնոլոգիայի մշակումը, որը թույլ կտա բացահանքի աշխատանքային հրապարակում ունենալ անհրաժեշտ մանրացվածությամբ պայթեցված լեռնային զանգված և կապահովի հանքաստիճանի շեղի հարթ մակերևույթ, արդիական խնդիր է:

Խնդրի դրվածքը և հետազոտության մեթոդները: Պայթեցման արդյունքների գնահատումը արտահայտվում է ՊՆ-ի լիցքից $R_1, R_2, R_3, \dots, R_7$ հեռավորության վրա ապարների քայքայման բնութագրիչ գոտիների սահմանների մեծությամբ (նկ.1): ՊՆ-ի լիցքի պայթեցման դեպքում լիցքի խոռոչի պատի վրա առաջանում է ապարի ամրության սահմանը ($\sigma_{\text{ժ}}$) հարյուրապատիկ անգամ գերազանցող զազագոյացման արգասիքի սկզբնական P_1 ճնշում ($P_1 > 100\sigma_{\text{ժ}}$), որի հետևանքով լիցքի շուրջը տեղի է ունենում R_1 շառավղով ապարի գերմանրացում, իսկ լիցքից R_2 հեռավորության վրա զազագոյացման արգասիքի ճնշումը նվազում է $100 \sigma_{\text{ժ}} > P_2 > \sigma_{\text{ժ}}$ սահմաններում և առաջացնում է ապարի կարգավորված մանրացում:



Նկ.1. Պայթեցման դեպքում զազագոյացման արգասիքի ճնշման մեծության փոփոխությունը՝ կախված ՊՆ-ի լիցքի և դիտարկվող գոտու հեռավորությունից.

- 1 - ՊՆ-ի լիցք, 2 - գերմանրացման գոտի, 3 - կարգավորված մանրացման գոտի,
4 - չկարգավորված մանրացման գոտի, 5 - ճեղքառաջացման գոտի, 6 - պոկման գոտի,
7 - ցնցման գոտի

Լիցքի խոռոչից $R_3, R_4, \dots, R_7$ հեռավորության վրա զազառաջացման արգասիքի ճնշումը դառնում է ավելի փոքր, քան ապարի ամրության սահմանը ($P_3, P_4, \dots$,

$P < \sigma_{\text{сж}}$), և տեղի է ունենում ճեղքառաջացման, զանգվածից ապարների պոկման և ցնցման գործընթացը:

Ապարի քայքայման բնութագրիչ գոտիների շառավիղների հաշվարկման բանաձևերից (աղ. 1) պարզ է դառնում, որ կարգավորված մանրացման գոտու սահմանների մեծացումը հնարավոր է մեծ տրամագծով և դետոնացման մեծ արագությամբ օժտված ՊՆ-ի լիցքի կիրառման դեպքում: Իհարկե, նման մոտեցումն իր հերթին կուղեկցվի ճեղքառաջացման և պոկման գոտու սահմանների մեծացմամբ:

Աղյուսակ 1

Ապարի քայքայման բնութագրիչ գոտիների շառավիղների հաշվարկման բանաձևերը


Հաշվարկման բանաձևերը	Արժեքները
Գերմանրացման գոտու շառավիղը, մ $R_{\text{неp}} = D_{\text{BB}} d \sqrt{\frac{K_{\text{п}} \rho_{\text{BB}}}{8 \sigma_{\text{сж}}}} \quad [4]$ Կարգավորված մանրացման գոտու շառավիղը, մ $R_{\text{p.o}} = D_{\text{BB}} d \sqrt{\frac{\rho_{\text{BB}}}{8 K_{\text{м}} \sigma_{\text{pac}}}} \quad [5]$ $K_{\text{м}} = 1 + \frac{1}{4E} (\gamma_{\text{нз}} \rho_{\text{BB}} D_{\text{BB}}^2) (1 + \mu)$ Ճեղքառաջացման գոտու շառավիղը, մ $R_{\text{T}} = 0.21 D_{\text{BB}} d^4 \sqrt{\frac{\rho_{\text{BB}}^3}{\sigma_{\text{сж}}}} \sqrt{\frac{D_{\text{BB}}}{\sigma_{\text{ср}} K_{\text{с}}}} \quad [6]$	ρ_{BB} - ՊՆ-ի խտությունը, կգ/մ³ D_{BB} - ՊՆ-ի դետոնացման արագությունը, մ/վ d - ՊՆ-ի լիցքի տրամագիծը, մ $K_{\text{п}}$ - լիցքի խտույցից ապարի հարվածային ալիքի բեկման գործակիցը $\sigma_{\text{сж}}$ - ապարի ամրության սահմանը՝ ըստ սեղմման, ՄՊա σ_{pac} - ապարի ամրության սահմանը՝ ըստ ձգման, ՄՊա, $\gamma_{\text{нз}}$ - լիցքի խտույցի իզենտրոպիկական զարգացման գործակիցը, $\sigma_{\text{ср}}$ - ապարի ամրության սահմանը՝ ըստ խզման, ՄՊա, $K_{\text{с}}$ - ճեղքավորված զանգվածի ստրուկտուրային թուլացման գործակիցը E - Յունգի մոդուլը μ - Պուասոնի գործակիցը

Ուստի առաջարկվել է զանգվածային պայթեցման գործունեության կարգավորման նոր տեխնոլոգիա, որի մշակումը պահանջում է.

- իրականացնել մեծ տրամագծով և դետոնացման մեծ արագությամբ օժտված ՊՆ-ի լիցքի զանգվածային պայթեցում,
- մինչ զանգվածային պայթեցումը՝ հորատանցքերի վերջին շարքին զուգահեռ կիրառել ՊՆ-ի գծային լիցքով պայթեցում:

Զանգվածային և գծային պայթեցման պարամետրերի ընտրությունը կատարվել է՝ որպես արգումենտ ընդունելով ՊՆ-ի լիցքի տրամագիծը: Զանգվածային և գծային լիցքով պայթեցման պարամետրերը բերված են աղ. 2-ում: ՊՆ-ի լիցքի

զանգվածային և գծային պայթեցման հորատանցքային ցանցի բաշխվածությունը և պայթեցման սխեման պատկերված են նկ. 2-ում:



Նկ. 2. Հորատանցքային ցանցի և ՊՆ-ի լիցքի բաշխվածության սխեման զանգվածային և գծային պայթեցման դեպքում.

1 - մակերևութային դանդաղեցուցիչ, 2 - խցանյութ, 3 - հիմնական ՊՆ, 4 – ներհորատանցքային դանդաղեցուցիչ, 5 - առաջնային ՊՆ, 6 - դետոնացիոն քուլ, 7 - ՊՆ գծային լիցք, 8 - ՊՆ հատակային լիցք

Աղյուսակ 2

Զանգվածային և գծային լիցքի պայթեցման հաշվարկային պարամետրերը

Զանգվածային պայթեցման հաշվարկային պարամետրերը		Գծային լիցքի պայթեցման հաշվարկային պարամետրերը	
Ցուցանիշները	հաշվարկային բանաձևերը	Ցուցանիշները	հաշվարկային բանաձևերը
1	2	3	4
Կիրառվող ՊՆ-ը	Էմուլսիոն ՊՆ -Արմեքս-750 $\rho_{BB} = 1200 \text{ կգ/մ}^3$ $D_{BB} = 4800 \dots 5200 \text{ մ/վ}$	Կիրառվող ՊՆ-ը	Խոշոր դիսպերսիոն ՊՆ - Անֆո $\rho_{BB} = 8200 \text{ կգ/մ}^3$ $D_{BB} = 2400 \dots 3200 \text{ մ/վ}$
Հանքաստիճանի հիմքի դիմադրության գիծը	$W = 24 d \sqrt{\frac{\rho_{BB}}{q}}$ q - ՊՆ -ի տեսակարար ծախսը; $q = 0.55 \dots 0.65 \text{ կգ/մ}^3$	Գծային լիցքի տրամագիծը	$d_{3ap} \leq \frac{d_{CK}}{3}; \text{ մ}$
		Գերհորատման չափը	$l_{\text{пер}} = (5 \dots 8) d_{CK}; \text{ մ}$

Աղյուսակ 2-ի շարունակություն


1	2	3	4
Հանքաստիճանի բարձրությունը	$H = \frac{24d}{\operatorname{ctg} \alpha} \sqrt{\frac{\rho_{BB}}{q}} = \frac{c}{\operatorname{ctg} \alpha};$ α-հանքաստիճանի թեքման անկյունը, $\alpha = 75 \dots 80^\circ$ c-անվտանգության գոտի $c = 2 \dots 3$ մ	Գծային լիցքերի հեռավորությունը	$a_{\text{ար}} =$ $= D_{BB} \frac{d_{\text{ար}}}{3} \sqrt{\frac{\rho_{BB}}{2 K m \sigma_{\text{pac}}}};$
Հորատանցքային ցանցի պարամետրերը	$a = b = 2 D_{BB} d \sqrt{\frac{\rho_{BB}}{8 K m \sigma_{\text{pac}}}}, \text{ մ}$ $K_m = 1 + \frac{1}{4E} (\gamma_{\text{из}} \rho_{BB} D^2_{BB})$ $(1 + \mu)$ $\sigma_{\text{pac}} = (25 \dots 30) \cdot 10^6 \text{ Պա}, \gamma_{\text{из}} = 3,$ $\mu = 0.27, E = 3.8 \cdot 10^{10} \text{ Պա}$	Հատակային լիցքի երկարությունը	$l_{\text{д.ар}} = l_{\text{пер}} + d_{\text{СК}}; \text{ մ}$
		Խցանյութի երկարությունը	$l_{\text{заб}} = (10 \dots 20) d_{\text{ар}}; \text{ մ}$
Գերհորատման չափը	$l_{\text{пер}} = 0.5 q w, \text{ մ}$	Գծային լիցքի երկարությունը	$l_{\text{л.ар}} = l_{\text{СК}} - l_{\text{д.ар}} - l_{\text{заб}}; \text{ մ}$
Խցանյութի երկարությունը	$l_{\text{заб}} = (20 \dots 30) d; \text{ մ}$	Գծային լիցքի քանակը	$Q = 0.785 \rho_{BB} d_{\text{ар}}^2 l_{\text{л.ар}};$ $կգ$
Խցանյութի երկարությունը	$l_{\text{заб}} = (20 \dots 30) d; \text{ մ}$	Գծային լիցքի քանակը	$Q = 0.785 \rho_{BB} d_{\text{ар}}^2 l_{\text{л.ар}};$ $կգ$
ՊՆ լիցքի քանակը հորատանցքում	$Q = \pi \rho_{BB} d^2 \frac{l_{\text{ар}}}{4}; \text{ կգ}$	Հատակային լիցքի քանակը	$Q = 0.785 \rho_{BB} d_{\text{СК}}^2 l_{\text{д.ар}};$ $կգ$
ՊՆ լիցքի երկարությունը	$l_{\text{ар}} = l_{\text{СК}} - l_{\text{заб}}; \text{ մ}$	Կարճ գծային լիցքի քանակը	$Q = 0.785 \rho_{BB} d_{\text{ар}}^2 l_{\text{к.ар}};$ $կգ$

Առաջարկված գծային լիցքով պայթեցման եղանակը գրեթե նույնն է, ինչ եզրագծային պայթեցումն է, բայց ավելի պարզ և հեշտ իրականացնելի: Հորատանցքերի համեմատաբար մոտ դասավորության պատճառով եզրագծային պայթեցումը միշտ ուղեկցվում է հորատման գերաձախսով: Գծային լիցքով պայթեցման դեպքում հորատման գերաձախսը փոխհատուցվում է՝ ի հաշիվ առաջարկված զանգվածային պայթեցման նոր տեխնոլոգիայի, որը թույլ է տալիս մեծացնել հորատանցքային ցանցի պարամետրերը (շնորհիվ մեծ տրամագծով և բարձր փշրողա-

կանությամբ ՊՆ-ի լիցքի կիրառման), հետևաբար և նվազեցնել ապարի մանրացման վրա հորատման տեսակարար ծախսը:

Գծային լիցքով պայթեցումն իրականացվում է հետևյալ սկզբունքով:

Զանգվածային պայթեցման վերջին շարքից $b/2$ հեռավորության վրա հորատվում են վերջին շարքին զուգահեռ միմյանցից a_{sep} հեռավորության վրա l_{CK} և $2/3 l_{CK}$ երկարությամբ հորատանցքեր: Հորատանցքերի հատակային մասը լիցքավորվում է (համեմատաբար փոքր փշրողականություն ունեցող ՊՆ-ով) անֆոյով, իսկ վերին մասը՝ գծային լիցքերով: Գծային լիցքը ներկայացնում է հորատանցքի մեջ իջեցված պոլիէթիլենային խողովակ, որում տեղադրված են ՊՆ-անֆո և դետոնացիոն քուղ (նկ.2): Պոլիէթիլենային խողովակի տրամագիծը, որը հանդիսանում է գծային լիցքի տրամագիծը, ընտրվում է ըստ աղ. 3-ում բերված պայմանի՝ հորատանցքի և գծային լիցքի միջև ապահովելով օդային բացակ: Օդային բացակի առկայության դեպքում պայթեցման գազագոյացման արգասիքի ճնշումը դառնում է ավելի փոքր, քան ապարի ամրության սահմանը՝ ըստ սեղմման, որի հետևանքով լիցքի շուրջը ապարների քայքայում զրեթե տեղի չի ունենում, բայց լինելով ապարի ամրության սահմանից մեծ՝ ըստ ձգման, հասցնում է առաջացնել գծային ճեղք, իսկ գազային ճնշման ներքո տեղի է ունենում լիցքի խոռոչի իզենոտրոպիկական զարգացում, հետևաբար և գծային ճեղքի լայնացում (նկ.3):




Նկ. 3. Գծային և հատակային լիցքի խոռոչի իզենոտրոպիկական զարգացման գործընթացը.

1 - ՊՆ-ի գծային լիցք, 2 - ՊՆ-ի հատակային լիցք

Գծային լիցքերի պայթեցումն իրականացվում է միաժամանակ, ակնթարթային գործողությամբ:

ՊՆ գծային լիցքով պայթեցման նպատակն է պայթեցվող բլոկում հանքատիճանի մերկացված մակերևույթին զուգահեռ ստեղծել նոր մերկացված մակերևույթ՝ գծային ճեղքի տեսքով: Գծային ճեղքի ստեղծումը կընդհատի պայթեցվող միջավայրի համասեռությունը նոր օդային միջավայրով:

Երկու ոչ համասեռ միջավայրերի բաժանման սահմանագծում ՊՆ-ի լիցքի էներգիայի քանակության բաշխվածությունն արտահայտվում է հետևյալ կերպ (նկ. 4):



Նկ.4. Պայթեցման էներգիայի բաշխվածության սխեման երկու ոչ համասեռ միջավայրերի բաժանման սահմանագծում. 1 - ապարի կտորներով լցված գծային ձեղք, 2 - օդային ձեղք

$$E = E_{\text{дп}} + \sum_{i=1}^n E_{\text{от}i} + \sum_{i=1}^n E_{\text{пр}i}, \text{ կՋ}, \quad (1)$$

որտեղ $E_{\text{дп}}$ -ը կարգավորված մանրացման վրա ծախսվող էներգիայի քանակն է, $E_{\text{от}}$ -ը՝ երկու միջավայրերի սահմանագծում անդրադարձման էներգիայի քանակը, $E_{\text{пр}}$ -ը՝ մի միջավայրից մյուսին անցման էներգիայի քանակը:

Կախված երկու անհամասեռ միջավայրերի ակուստիկ կոշտության տարբերությունից՝ անդրադարձման էներգիան փոփոխվում է մեծ սահմաններում:

Եթե գծային ձեղքը լցված է ավազակավային կամ խճային խառնուրդով, ապա պայթեցման էներգիայի 4,0...28%-ն է անդրադառնում, իսկ օդային և պայթեցվող միջավայրերի սահմանագծում անդրադարձման էներգիայի քանակը մոտ է 100%-ին:

Հետևում է, որ օդային ձեղքի ստեղծման դեպքում.

$$\sum_{i=1}^n E_{\text{пр}i} \rightarrow 0, \sum_{i=1}^n E_{\text{от}i} = E_{\text{от}}:$$

Հետևաբար՝

$$E = E_{\text{дп}} + E_{\text{от}} \text{ կՋ}: \quad (2)$$

Այսինքն՝ օդային ձեղքի ստեղծումը կհանդիսանա զանգվածային պայթեցման էներգիայի տարածումը կանխող էկրան և կսահմանափակի ձեղքառաջացման և պոկման գոտու սահմանների մեծացումը:

Հետազոտության արդյունքները: Առաջարկված պայթեցման տեխնոլոգիան կիրառվել է Արամուսի բացահանքում, ներկայացված ըստ Մ.Մ. Պրոտոդյակոնովի 10...12 ամրության, 2,65...2,80 մ/ս² ծավալային կշռով խոշոր բլոկավորված բա-

զալտներով: Փորձաարդյունաբերական պայթեցման արդյունքները՝ ըստ առաջարկված և գործող տեխնոլոգիաների, բերված են աղ. 3-ում: Պայթեցման արդյունքների գնահատման չափանիշ ընդունվել են պայթեցված զանգվածի արտաչափս կտորների ելքը և հանքաստիճանի շեյի հարթ մակերևույթի ապահովումը, որը բնորոշվում է հանքաստիճանի թեքման կայունությամբ և գնահատվում է պայթեցվող բլոկի ողջ երկարությամբ հանքաստիճանի թեքման անկյան մեծության փոփոխման միջակայքով:

Պայթեցման վերլուծության արդյունքները՝ ըստ առաջարկված տեխնոլոգիայի, թույլ են տալիս եզրակացնել, որ հանքաստիճանի թեքման կայունության ապահովումը համարվում է պայթեցվող ապարների մանրացման և փլվածքի ձևավորման հիմնական գործոն: Այն նվազեցնում է պայթեցված զանգվածում արտաչափս կտորների ելքը 3,5...5 անգամ և հնարավորություն է ստեղծում՝ ստանալու պայթեցված զանգվածի կոմպակտ փլվածք:

Աղյուսակ 3

Առաջարկված և գործող պայթեցման ցուցանիշները

Զանգվածային պայթեցման պարմետրերը			
Ցուցանիշների անվանումը	Չափ. միավ.	Պայթեցման տեխնոլոգիան	
		գործող	առաջարկված
1	2	3	4
Հանքաստիճանի բարձրությունը	մ	10	10
Հանքաստիճանի թեքման անկյունը	աստ	78	78
Հորատանցքի տրամագիծը	մ	0,115	0,140
Կիրառվող ՊՆ-ի տիպը		Անֆո	Արմեքս
Հանքաստիճանի հիմքի դիմադրության գիծը	մ	3,3	5,0
Հորատացքերի միջև եղած հեռավորությունը	մ	2,2	3,5
Հորատանցքային շարքերի միջև եղած հեռավորությունը	մ	2,4	3,7
Հորատանցքերի խորությունը	մ	11,0	11,0
ՊՆ-ի քանակը հորատանցքում	կգ	64,6	125,5
ՊՆ-ի լիցքի երկարությունը	մ	7,6	6,8
ՊՆ-ի տեսակարար ծախսը	կգ/մ ³	0,89	
Գծային լիցքի պայթեցման պարամետրերը			
Գծային լիցքի տրամագիծը	մ		0,042
Գծային լիցքերի հեռավորությունը	մ		1,0
Գերհորատման չափը	մ		0,9

Աղյուսակ 3-ի շարունակությունը

1	2	3	4
Հատակային լիցքի երկարությունը	մ		1,2
Խցանյութի երկարությունը	մ		0,8
Գծային լիցքի երկարությունը	մ		7,0
Կարճ գծային լիցքի երկարությունը	մ		5,5
Գծային լիցքի քանակը	կգ		8,5
Հատակային լիցքի քանակը	կգ		15,0
Կարճ գծային լիցքի քանակը	կգ		6,2
ՊՆ-ի տեսակարար ծախսը	կգ/մ ³		0,98
Պայթեցման սխեման	Մեղանաձև		
Արտաչափս կտորների ելքը պայթեցված զանգվածում	%	15...18	3...5
Հանքաստիճանի թեքման անկյան փոփոխության միջակայքը սահմանված մակերեսի վրա	աստ	62...85	75...80
Պայթեցված զանգվածի փլվածքի լայնքը	մ	38,5	30,5
Պայթեցված զանգվածի փլվածքի բարձրությունը	մ	6,3	8,2

Եզրակացություն.

1. Հանքաստիճանի թեքման կայունության ապահովումը համարվում է պայթեցվող ապարների մանրացման և փլվածքի ձևավորման հիմնական գործոն: Այն նվազեցնում է պայթեցված զանգվածում արտաչափս կտորների ելքը 3.5...5 անգամ և հնարավորություն է ստեղծում՝ ստանալու պայթեցված զանգվածի կոմպակտ փլվածք:

2. Հանքաստիճանի թեքման կայունության և հանքաստիճանի շեփի հարթ մակերևույթի ապահովումը նպատակահարմար է միայն մեծ տրամագծով և բարձր փշրողականությամբ ՊՆ-ի լիցքի և գծային լիցքի համատեղ պայթեցման դեպքում, որը թույլ է տալիս մեծացնել հորատանցքային ցանցի պարամետրերը, հետևաբար և նվազեցնել ապարի մանրացման վրա հորատման տեսակարար ծախսը:

3. Առաջարկված զանգվածային պայթեցման տեխնոլոգիայի կիրառումը փոխհատուցում է գծային հորատանցքերի հորատման գերաժախսը՝ շնորհիվ զանգվածային պայթեցման հորատանցքային մեծ ցանցի և գծային պայթեցման կարճ հորատանցքերի կիրառման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Воробьев В.Д., Перегудов В.В.** Взрывные работы в скальных породах. — Киев: Наукова думка, 1984. -233 с.

2. **Угольников В.К., Симонов П.С., Угольников Н.В.** Рациональная область применения различных типов ВВ и конструкций скважинных зарядов// Межвуз. сб. науч. тр. - Магнитогорск: МГТУ, 2006. - С. 347-351.
3. **Агаронян Г.А., Агаронян А.Г.** Регулирование степени дробления взорванной горной массы при разработке месторождений нерудных строительных материалов // Известия НАН РА и НПУА. Сер. Техн. наук.- 2019. – Т. 72, N1. - С. 26-35.
4. **Крюков Г.М., Докутович М.И., Жаровонко С.Н.** Степень дробления и выхода негабарита при взрывном рыхлении горных пород на карьерах //Горный информационно-аналитический бюллетень. -2011.- N4.- С. 347-351.
5. **Ефремов Э.И.** Управление размерами зон переизмельчения горных пород при их взрывном разрушении //Вестник КТУ: Сб. науч. Праць.-Вып.18.- Кривой Рог, 2007. - С. 36-39.
6. **Кутузов Б.Н., Андриевский А.П.** Новая теория и новые технологии разрушения горных пород удлиненными зарядами взрывчатых веществ.- Новосибирск: Наука, 2002. - 96с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 15.06.2021:

Г.А. АГАРОНЯН

НОВАЯ ТЕХНОЛОГИЯ РЕГУЛИРОВАНИЯ ДЕЙСТВИЙ ЭНЕРГИИ МАССОВОГО ВЗРЫВА НА КАРЬЕРАХ

Эффективность взрывных работ на карьерах характеризуется выходом негабарита, проработкой подошвы уступа, параметром развала взорванной горной массы и размером структурного нарушения законтурной части горного массива. При производстве массовых взрывов на карьерах за контуром взрывающего блока всегда нарушается естественная структура горного массива, что является очагом выхода негабарита, отрицательно влияет на устойчивость откосов уступа, а также затрудняет регулирование параметров развала взорванной массы.

Работа посвящена разработке эффективных методов ведения взрывных работ по ограничению зон трещиноватости и зон откола массива горных пород за контуром взрывающего блока. Разработан новый комплексный метод уступной отбойки путем применения скважинных зарядов большого диаметра и взрывчатых веществ с большой детонацией, а также взрыванием линейных зарядов. Предложенный метод отбойки позволяет ограничить радиус зоны трещинообразования и зоны откола и, следовательно, обеспечить устойчивость откоса уступа, а также получение гладкой поверхности уступа, что исключает выход негабарита и создает возможность получить развал горной массы заданных параметров.

Ключевые слова: уступ, взорванная масса, зона трещинообразования, обнаженная поверхность, заряд взрывчатого вещества.

G.A. AHARONYAN

**A NEW TECHNOLOGY FOR REGULATING ACTIONS OF
ENERGY OF MASS EXPLOSION AT THE OPEN PITS**

The efficiency of blasting operations in open pits is characterized by the output of oversized material, the study of the foot of the ledge, the parameter of the collapse of the exploded rock mass and the size of the structural violation of the legit part of the mountain range. During the production of mass explosions in an open pit, the natural structure of the rock mass is always violated behind the contour of the exploding block, which is the source of the oversized output, negatively affects the stability of the ledge slopes, and also makes it difficult to regulate the parameters of the collapse of the exploded mass.

The work is devoted to the development of effective methods for conducting blasting operations to limit the zones of fracturing and zones of rock mass breakaway behind the contour of the exploding block. A new complex method of ledge breaking has been developed by using large-diameter borehole charges and explosives with greater detonation, as well as exploding linear charges. The proposed method of rebounding allows to limit the radius of the crack formation and the breakaway zones, therefore, to ensure the stability of the slope of the ledge, as well as to obtain a smooth surface of the ledge, which eliminates the exit of oversized rock and makes it possible to obtain the collapse of the rock mass of the specified parameters.

Keywords: ledge, exploded mass, crack formation zone, exposed surface, explosive charge.

Մ.Ք. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

ԴԻՆԱՄԻԿ ԲԵՌՈՎ ԷԼԵԿՏՐԱԲԱՆԵՑՄԱՆ ՇԱՐԺԻՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄՈՂԵԼ

Պարկ-Գորևի հավասարումների համակարգի կիրառմամբ MATLAB/SIMULINK ծրագրային միջավայրում գնահատվել են էլեկտրաբանեցման սինքրոն շարժիչի ստատորի, գրգռման և հանգստացնող փաթույթների հոսանքների, շարժիչի էլեկտրամագնիսական մոմենտի փոփոխությունները շարժիչի սնման լարման և բեռի դիմադրող մոմենտի տարբեր արժեքների դեպքում:

Առանցքային բառեր. էլեկտրաբանեցման շարժիչ, բեռի դիմադրող մոմենտ, աշխատանքային ռեժիմ:

Ներածություն: Արտադրական ձեռնարկություններում օգտագործվող տեխնոլոգիական մեխանիզմները շահագործման մեջ են դրվում էլեկտրաբանեցման շարժիչների միջոցով: Որոշ տեխնոլոգիական մեխանիզմների ստեղծած բեռի դիմադրող մոմենտը պարբերաբար փոփոխվում է, ինչը առանձնակի դժվարություններ է առաջացնում դրանց էլեկտրաբանեցման շարժիչների համար: Հարկ է նշել նաև, որ արդյունաբերական ձեռնարկություններում, կախված օգտագործվող մեծաթիվ էլեկտրատեխնիկական սարքերի աշխատանքային բնութագրերից, էլեկտրաբանեցման շարժիչների սնման լարումները կարող են շեղվել իրենց անվանական արժեքից: Ներկայացվածից հետևում է, որ պատահականորեն փոփոխվող բեռի և սնման լարման տակ աշխատող շարժիչի աշխատանքային ռեժիմները չեն կարող ապահովել տեխնոլոգիական գործընթացի կայուն և անխափան աշխատանքը: Ուստի անհրաժեշտություն է առաջացել հետազոտել էլեկտրաբանեցման շարժիչի բնութագրերը տարբեր աշխատանքային ռեժիմներում:

Հայտնի են էլեկտրաբանեցման շարժիչների բնութագրերի հետազոտման վերաբերյալ տարբեր աշխատություններ: Դրանցից կարելի է առանձնացնել մեխանիզմին ամրակցված պսակային ժանանվի և էլեկտրաշարժիչի լիսեռին միացված առանցքակալային ժանանվի շրջանցման անկյան, արագության և արագացման փոփոխությունների մոդելավորման միջոցով էլեկտրաբանեցման շարժիչի վիճակի հետազոտմանը նվիրված աշխատանքները [1, 2]:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում [3] աշխատությունը: Դրանում մոդելավորել և վերլուծել է երկու առանձին եռաֆազ շարժիչներով էլեկտրաբանեց-

ման համակարգը: Շարժիչների ստատորի փաթույթները իրար միացված են հատուկ սխեմայով, իսկ լիսեռները արագության ռեդուկտորի միջոցով մեխանիկորեն միացված են ընդհանուր բեռի լիսեռին: Մաթեմատիկական մոդելը մանրամասն մշակված է, և համակարգը մոդելավորվում է MATLAB/SIMULINK- ի միջոցով: Հիմնավորվել է, որ երկու շարժիչների համապատասխան լիսեռների վրա հավասարակշռված բեռի դեպքում երկու շարժիչների դինամիկ պահվածքները նույնական են:

[4] աշխատությունում Պարկ-Գորնի հավասարումների հիման վրա մշակված մաթեմատիկական մոդելի միջոցով կատարվել է ասիմետրիկ կարճ միացումով երկառանգք էլեկտրաբանեցումով ոչ բացահայտ բևեռներով սինքրոն գեներատորի օդի բացթողմամբ մագնիսական դաշտի հետազոտություն:

Հայտնի աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում դիտարկվում են առանձին մասնակի հարցեր, ինչը հնարավորություն չի տալիս՝ ամբողջական պատկերացում կազմելու շահագործման ժամանակ էլեկտրաբանեցման համակարգերի աշխատանքային բնութագրերի փոփոխման վերաբերյալ:

Աշխատանքի նպատակն է հետազոտել փոփոխվող բեռով և սնման լարումով աշխատող էլեկտրաբանեցման շարժիչի աշխատանքային բնութագրերի փոփոխությունը նրա շահագործման ընթացքում:

Հետազոտման մեթոդը: Խնդրի լուծման համար օգտագործվել են Պարկ-Գորնի դիֆերենցիալ հավասարումները [5- 7]:

$$\begin{cases} u_d = p\psi_d + (1 + s)\psi_q + i_d R, \\ u_q = p\psi_q - (1 + s)\psi_d + i_q R, \\ u_f = p\psi_f + i_f R_f, \\ 0 = p\psi_{Dd} + i_{Dd} R_{Dd}, \\ 0 = p\psi_{Dq} + i_{Dq} R_{Dq}, \\ T \frac{ds}{dt} = m - m_c, \end{cases} \quad (1)$$


որտեղ u_d - ն, u_q - ն ստատորի փաթույթի սեղմականների լարումներն են՝ ըստ երկայանական և լայնական առանցքների, i_d - ն, i_q - ն՝ ստատորի փաթույթի հոսանքները՝ ըստ երկայանական և լայնական առանցքների, u_f - ը, i_f - ը՝ գրգռման լարումը և հոսանքը, S - ը՝ սահքը, i_{Dd} - ն, i_{Dq} - ն՝ հանգստացնող փաթույթով հոսող հոսանքները՝ ըստ երկայանական և լայնական առանցքների, ψ_d - ն, ψ_q - ն՝

ստատորի փաթույթի հոսքակցումները՝ ըստ երկայնական և լայնական առանցքների, ψ_f - ը՝ գրգռման փաթույթի հոսքակցումը, ψ_{Dd} - ն, ψ_{Dq} - ն՝ հանգստացնող փաթույթի հոսքակցումները՝ ըստ երկայնական և լայնական առանցքների, R - ը, R_f - ը՝ ստատորի ֆազի և գրգռման փաթույթների ակտիվ դիմադրությունները, R_{Dd} -ն, R_{Dq} -ն՝ հանգստացնող փաթույթների ակտիվ դիմադրությունները՝ ըստ երկայնական և լայնական առանցքների, T - ն՝ իներցիայի հաստատունը, m_c - ը՝ տեխնոլոգիական բեռի մոմենտի հարաբերական մեծությունը, θ - ն՝ ցանցի լարման վեկտորով և գրգռման փաթույթով ստատորի փաթույթում ինդուկցված էլշուի վեկտորի կազմած անկյունը, ψ_d - ն, ψ_q - ն, ψ_f - ը, ψ_{Dd} - ն, ψ_{Dq} - ն որոշվում են՝


$$\begin{cases} \psi_d = \dot{I}_d X_d + \dot{I}_f X_{ad} + \dot{I}_{Dd} X_{ad}, \\ \psi_q = \dot{I}_q X_q + \dot{I}_{Dq} X_q, \\ \psi_f = \dot{I}_d X_{ad} + \dot{I}_f X_f + \dot{I}_{Dd} X_{ad}, \\ \psi_{Dd} = \dot{I}_d X_{ad} + \dot{I}_f X_{ad} + \dot{I}_{Dd} X_{Dd}, \\ \psi_{Dq} = \dot{I}_q X_{aq} + \dot{I}_{Dq} X_{Dq}, \end{cases} \quad (2)$$

որտեղ $x_d = L_d$ - ն, $x_q = L_q$ - ն ստատորի փաթույթի ինդուկտիվ դիմադրություններն են երկայնական և լայնական առանցքներով, $x_f = L_f$ - ը՝ գրգռման փաթույթի ինդուկտիվ դիմադրությունը, $x_{Dd} = L_{Dd}$, $x_{Dq} = L_{Dq}$ - ն՝ հանգստացնող փաթույթի ինդուկտիվ դիմադրությունները երկայնական և լայնական առանցքներով, x_{ad} , x_{aq} - ն՝ շարժիչի փաթույթի փոխինդուկտիվ դիմադրությունները երկայնական և լայնական առանցքներով:


Հետազոտության արդյունքները: (1) և (2) հավասարումների համակարգերը ձևափոխելով՝ լուծվել է խնդիրը MATLAB/SIMULINK ծրագրային միջավայրում: Նկ. 1.4-ում համապատասխանաբար բերված են iq, if, iDd և iDq հոսանքների ժամանակային փոփոխության որոշման սխեմաները:




Նկ. 1. i_q հոսանքի փոփոխության որոշման սխեման



Նկ. 2. i_f հոսանքի փոփոխության որոշման սխեման



Նկ. 3. i_{Dd} հոսանքի փոփոխության որոշման սխեման




Նկ. 4. i_{Dq} հոսանքի փոփոխության որոշման սխեման

Ուսումնասիրությունները կատարվել են շարժիչի լարման և բեռի դիմադրող մոմենտի անվանական, անվանականից մեծ և փոքր արժեքների դեպքում:


Նկ. 5 - 7-ում ներկայացված են ստատորի, գրգռման և հանգստացնող փաթույթների հոսանքների ժամանակային փոփոխությունները բեռի դիմադրող մոմենտի հաստատված և ցանցի սնման լարման անվանականից մեծ և փոքր արժեքների դեպքում:

Նկ. 5 - 7-ից երևում է, որ հոսանքի արժեքների փոփոխման առավելագույն և նվազագույն արժեքները, սնման լարման անվանականից մեծ և փոքր արժեքների դեպքում, համապատասխանաբար մեծանում և փոքրանում են, միաժամանակ առավելագույն արժեքներին հասնելու ժամանակները համապատասխանաբար փոքրանում և մեծանում են:




Նկ. 5. i_d , i_q , i_f , i_{Dd} , i_{Dq} հոսանքների ժամանակային փոփոխությունները

$u_m = 1$, $m_c = 1$ դեպքում




Նկ. 6. i_d , i_q , i_f , i_{Dd} , i_{Dq} հոսանքների ժամանակային փոփոխությունները $u_m = 1,35$,

$m_c = 1$ դեպքում




Նկ. 7. i_d , i_q , i_f , i_{Dd} , i_{Dq} հոսանքների ժամանակային փոփոխությունները $u_m = 0,65$, $m_c = 1$ դեպքում


Նկ. 8-10-ում ներկայացված են անվանական լարման և բեռի մոմենտի հաստատված արժեքից մեծ և փոքր արժեքների դեպքում հոսանքների ժամանակային փոփոխությունները:



Նկ. 8. i_d , i_q , i_f , i_{Dd} , i_{Dq} հոսանքների և սահքի ժամանակային փոփոխությունները $u_m = 1$, $m_c = 1,4$ դեպքում



Նկ. 9. i_d , i_q , i_f , i_{Dd} , i_{Dq} հոսանքների և սահքի ժամանակային փոփոխությունները
 $u_m = 1,35$, $m_c = 1,4$ դեպքում




Նկ. 10. i_d , i_q , i_f , i_{Dd} , i_{Dq} հոսանքների և սահքի ժամանակային փոփոխությունները
 $u_m = 0,65$, $m_c = 1,4$ դեպքում

Դիմադրող մոմենտի մեծացման դեպքում շարժիչի ստատորի հոսանքների փոփոխման հաճախությունը նույնպես մեծանում է:

Ստացվել են շարժիչի էլեկտրամագնիսական մոմենտի ժամանակային փոփոխությունները՝ կախված բեռի դիմադրող մոմենտից և սնման լարումից (նկ.11):

Նկ. 11-ից հետևում է, որ բեռի դիմադրող մոմենտի անվանական արժեքի 40%-ի գերազանցման դեպքում շարժիչի մոմենտի փոփոխման պիկերի արժեքները փոքրանում են, իսկ դրանց առաջացման հաճախությունը՝ մեծանում:



Նկ. 11. M_d մոմենտի ժամանակային փոփոխությունները. ա) $u_m = 1,0$, բ) $u_m = 1,35$, գ) $u_m = 0,65$

Եզրակացություն: MATLAB/SIMULINK ծրագրային միջավայրում կատարված հետազոտությունները հաստատում են տեխնոլոգիական մեխանիզմների էլեկտրաբանեցման շարժիչների աշխատանքային բնութագրերի հսկման անհրաժեշտությունը՝ դրանց ավտոմատացված կառավարման արդյունավետության մեծացման համար:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21T-2B195 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Baghdasaryan M.K.** Methods of Research and Optimization of the Mineral Raw Material Grinding Proces.- NOVAsciencepublishers, USA, 2019. - 306 p.
2. **Багдасарян М.К., Алавердян С.С.** Математическая модель для исследования электромеханической системы мельница-двигатель // Изв. НАН РА и ГИУА. Сер.ТН.– 2013. - Т.LXVI, №2. - С.148-155.

3. **Onwuka I.K., Diyokey G.C., Obe E.S.** Dynamic Analysis of Series-Connected and Mechanically-Coupled Twin Synchronous Motor Drive // Nigerian journal of TECHNOLOGICAL development.- 2020.- Vol. 17, N.1.-P 33-39.
4. **Toshev S.E., Nurali Pirmatov, Haydarov S.D., Difuza Yakubova.** Analysis of magnetic field in the air gap not expressly pole synchronous generator excitation biaxially at asymmetrical short circuit // European Science Review.- 2017.- P.134-136.
5. **Лопухина Е.М., Семенчуков Г.А.** Автоматизированное проектирование электрических машин малой мощности. – М.: Высшая школа, 2002. -511 с.
6. **Копылов И.П.** Электрические машины: Учеб. для вузов. – М.: Высшая школа; Логос, 2006. – 680 с.
7. **Важнов А.И.** Переходные процессы в машинах переменного тока. - Л.: Энергия, 1980. - 256 с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 31.08.2021:

М.К. БАГДАСАРЯН

МОДЕЛЬ ДЛЯ ИССЛЕДОВАНИЯ РАБОЧИХ ХАРАКТЕРИСТИК ЭЛЕКТРОПРИВОДНОГО ДВИГАТЕЛЯ С ДИНАМИЧЕСКОЙ НАГРУЗКОЙ

Используя систему уравнений Парка-Гора в программной среде MATLAB / SIMULINK, дана оценка изменения токов статора, возбуждения и успокаивающих обмоток, а также электромагнитного момента двигателя синхронного электроприводного двигателя для различных значений напряжения питания и момента сопротивления нагрузки.

Ключевые слова: электроприводной двигатель, момент сопротивления нагрузки, рабочий режим.

M.K. BAGHDASARYAN

A MODEL FOR STUDYING THE PERFORMANCE CHARACTERISTICS OF ELECTRIC DRIVE MOTOR WITH A DYNAMIC LOAD

Using the Park-Gor system of equations in the MATLAB / SIMULINK software environment, the change in the stator currents, excitation and damping windings, as well as the electromagnetic torque of a synchronous electric drive motor for various values of the supply voltage and load resistance torque are estimated.

Keywords: electric drive motor, load resistance moment, operating mode.

Կ.Հ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, Մ.Զ. ՊՈՂՈՍՅԱՆ, Մ.Գ. ԲԱԿՈՒՆՑ
ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐՈՑԵՍՏԻՎ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԴՐԱՆՑ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ

Դիտարկվում են տարածությունների այնպիսի պրոյեկտիվ ձևափոխությունների սինթեզման հարցեր, որոնք թույլ են տալիս տարածության անսահմանափակ մասը արտապատկերել նրա երկկողմանի սահմանափակ տիրույթի վրա: Ուսումնասիրվում են ուղղի կետերի բազմության պրոյեկտիվ ձևափոխությունների կոնստրուկտիվ հատկությունները, և դրանց հիման վրա սինթեզվում են երկչափ տարածության (հարթության) որոշ ձևափոխություններ, որոնք ողջ կիսահարթությունը արտապատկերում են նրա սահմանափակ տիրույթի վրա:

Առանցքային բառեր. պրոյեկտիվ արտապատկերում, ձևափոխություն, ինվոլյուցիա, կոլինեացիա, անիսկական տարրեր, կրկնակի տարրեր, հոմոլոգիա, ինվերսիա:

Ներածություն: Գրաֆիկական մոդելավորման ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի հիմքում դրված է ողջ եռաչափ տարածության փոխարինումը դրա թվային մոդելով՝ համակարգչային վիրտուալ տարածությամբ: Սա թույլ է տալիս նախագծման ավանդական միջոցներից անցնել համակարգչային, ինչը ընձեռնում է նոր տեխնոլոգիական հնարավորություններ: Այս տեխնոլոգիայի կարևորագույն առանձնահատկություններից է մոդելների երկրաչափական հատկությունների ավտոմատացված ձևափոխությունների հնարավորությունը:

Եռաչափ գրաֆիկական մոդելավորման համակարգչային տեխնոլոգիան, մասնավորապես, թույլ է տալիս ավտոմատացնել մարդու գործունեությունը այնպիսի բնագավառում, որտեղ անհրաժեշտ է լինում ստեղծել եռաչափ իրականության ծավալային (ռելիեֆային) կերպարը՝ այն տեղավորելով սահմանափակ տարածության մեջ: Այդպիսի կերպարներից են ռելիեֆային հեռանկարները, օրինակ, հարթաքանդակները և բարձրաքանդակները:


Ռելիեֆային հեռանկարի երկրաչափական մոդելավորման համակարգչային տեխնոլոգիայի մշակումն ունի կարևոր գործնական նշանակություն տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ կիրառական արվեստում, և ճարտարապետության մեջ բազմաթիվ են այն դեպքերը, երբ անհրաժեշտ է լինում իրական դրվագների ակնառու պատկերման նպատակով ստեղծել ռելիեֆներ: Եռաչափ

իրականության ռելիեֆային պատկերները կիրառվում են թատրոնում, ինչպես նաև կինոնկարահանումների ժամանակ, երբ պետք է ստեղծել իրական բնապատկերի այնպիսի դեկորացիա, որը կտեղավորվի բեմի սահմանափակ տարածքում, սակայն կստեղծի իրական, անսահմանափակ բնապատկերի տպավորություն:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կիրառել տարածության այս կամ այն արտապատկերումը (ձևափոխությունը) այդ նույն տարածության սահմանափակ շերտի վրա: Ի տարբերություն հարթ գրաֆիկական մոդելավորման՝ ռելիեֆային մոդելավորման երկրաչափական օրինաչափությունները դեռևս լիակատար ուսումնասիրված չեն, որոնցով հնարավոր կլինե՞ր մշակել մոդելավորման համակարգչային տեխնոլոգիան: Ուստի մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երկրաչափական այն ձևափոխությունները, որոնք թույլ կտան տարածությունն արտապատկերել դրա սահմանափակ տիրույթի վրա: Դրանք կարող են հիմք ծառայել ռելիեֆային հեռանկարի երկրաչափական մոդելավորման ալգորիթմների մշակման և դրանց կառուցման գործընթացի ավտոմատացման համար: Այս խնդիրն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ ռելիեֆային կերպարի համակարգչային մոդելի առկայությունը թույլ կտա ավտոմատացնել ռելիեֆային պատկեր պարունակող օբյեկտների նախագծման գործընթացը և կազմակերպել դրանց արտադրությունը թվային կառավարմամբ հաստոցների (ինչպես նաև եռաչափ տպիչների) գործարկմամբ:


Ուղղի ձևափոխությունները: Աշխատանքում դիտարկվում է դրված խնդրի լուծման մի տարբերակ՝ հիմնված պրոյեկտիվ ձևափոխությունների վրա, որոնք տարածության անիսկական (անվերջ հեռու) տարրերը համապատասխանության մեջ են դնում սովորական տարրերի հետ:

Ուղղի պրոյեկտիվ ձևափոխությունը որոշվում է որպես երկրորդ կարգի գծի կետերի զույգ պրոյեկցիաների համապատասխանություն, երբ պրոյեկտման կենտրոնները պատկանում են այդ գծին [1-3]: Այսինքն, ուղղի պրոյեկտիվ ձևափոխությունը կարելի է դիտել որպես երկրորդ կարգի գծի բինար մոդել այդ գծի վրա: Նկ. 1-ում ցույց է տրված ***g*** ուղղի համապատասխան կետերի կառուցումը երկրորդ կարգի ***σ*** գծի միջոցով, որի վրա են դասավորված պրոյեկտման ***S₁*** և ***S₂*** կենտրոնները: Ակնհայտ է, որ ***σ*** գծի և ***g*** ուղղի հատման ***M*** և ***N*** կետերը կլինեն ձևափոխության հնարավոր երկու *կրկնակի* (անշարժ) կետերը: Նկարում կառուցված է ուղղի անիսկական ***F_{1∞}*** կետի համապատասխան ***F₂*** կետը, որը կոչվում է ձևափոխության *սահմանային կետ*: Ուղղի պրոյեկտիվ ձևափոխությունը միարժեքորեն առաջադրվում է, եթե նախապես տրված են երեք զույգ համապատասխան կետեր:



Նկ. 1. Ուղղի պրոյեկտիվ ձևափոխությունը

Մեր առջև դրված խնդրի լուծման համար անհրաժեշտ է ձևափոխությունն առաջադրել կրկնակի M , N կետերի և սահմանային F_2 կետի միջոցով (նկ. 2): Պարզվում է [4,5], որ այս դեպքում σ գիծը կարելի է տրոհել երկու՝ m և n ուղիղների, որոնցից առաջինն անցնում է M կետով, իսկ մյուսը՝ N կետով: Պրոյեկտման $S_1 \in m$ կենտրոնը կարելի է ընտրել կամայականորեն: $F \in n$ կետը կդասավորվի $S_1 F_{1\infty} \parallel g$ ուղղի վրա, իսկ $F_2 F$ և m ուղիղների հատման կետը կլինի պրոյեկտման S_2 կենտրոնը: Յուրաքանչյուր $A \in n$ կետի A_1 և A_2 պրոյեկցիաները կլինեն g ուղղի վրա հաստատված ձևափոխության համապատասխան կետերը:



Նկ. 2. Համապատասխան կետերի կապը


$O=M$ սկզբնակետի նկատմամբ ձևափոխության համապատասխան A_1 և A_2 կետերի կոորդինատները նշանակենք ρ_1 և ρ_2 : $OS_1 A_1$ և $N A A_1$ եռանկյունների, $OS_2 F_2$ և $N F F_2$ եռանկյունների, ինչպես նաև $OS_2 A_2$ և $N A A_2$ եռանկյունների նմանությունից ստանում ենք վերոհիշյալ կոորդինատների կապի հետևյալ արտահայտությունը՝

$$\rho_2 = \frac{\rho_1 l}{\rho_1 + k} \text{ և } \rho_1 = \frac{k \rho_2}{l - \rho_2}, \quad (1)$$

որտեղ l և k մեծությունները սահմանային F_2 կետի հեռավորություններն են համապատասխանորեն M և N կրկնակի կետերից:

Դժվար չէ նկատել, որ այս ձևափոխությունն g ուղղի անսահմանափակ NF_∞ ճառագայթն արտապատկերում է սահմանափակ NF_2 հատվածի վրա: Մա այն հատկությունն է, որն անհրաժեշտ է դրված խնդրի հետագա լուծման համար:

Դիտարկենք այն դեպքը, երբ տրված են M և N կրկնակի կետերը, իսկ F_2 սահմանային կետը MN հատվածի միջնակետն է (նկ. 3): Այս դեպքում պրոյեկտման S_1 և S_2 կենտրոնները դասավորվում են g ուղղի նկատմամբ սիմետրիկ, որի հետևանքով կետերի համապատասխան զույգերը դառնում են փոխադարձ փոխարինելի (եթե $B_1=A_2$, ապա $B_2=A_1$): Այսինքն, կրկնակի և սահմանային կետերի այսպիսի դասավորության դեպքում ստանում ենք ուղղի կետերի բազմության *ինվոլյուցիոն* ձևափոխություն [4-6]:



Նկ. 3. Ինվոլյուցիայի առաջադրումը


Եթե $O=F_2$ սկզբնակետի նկատմամբ ինվոլյուցիայի համապատասխան A_1 և A_2 կետերի կոորդինատները նշանակենք ρ_1 և ρ_2 , ապա կարելի է ստանալ դրանց կապի հետևյալ արտահայտությունը՝

$$\rho_1 \rho_2 = R^2, \quad (2)$$

որտեղ R մեծությունները սահմանային F_2 կետի հեռավորությունն են կրկնակի կետերից: Այս ինվոլյուցիան g ուղղի անսահմանափակ NF_∞ ճառագայթն արտապատկերում է սահմանափակ NF_2 հատվածի վրա:

Հարթության ձևափոխությունները: Հարթության մեջ դիտարկենք M կենտրոնով ճառագայթների փունջը (նկ. 4): Այդ փնջի ճառագայթներին պատկանող կետերի բազմությունն ընդգրկում է հարթության բոլոր կետերը: Փնջի ճառագայթ-

ներից յուրաքանչյուրի վրա առաջադրենք վերևում դիտարկված պրոյեկտիվ ձևափոխությունը՝ երկու կրկնակի կետերի և սահմանային կետի միջոցով:



Նկ. 4. Հարթության արտապատկերումը նրա օղակաձև տիրույթի վրա

Օրինակ, g ճառագայթի վրա առաջադրված են կրկնակի՝ M, N և սահմանային՝ F_2 կետերը, ընդ որում, M կետը փնջի կենտրոնն է: Արդյունքում սինթեզվում է հարթության որոշակի ձևափոխություն, որը կարելի է բնութագրել որպես g ճառագայթի ձևափոխության պտույտ նրա կրկնակի M կետի շուրջը:

Եթե բացառենք N կետի պտույտով առաջացած $n_1=n_2$ շրջանը, ապա սինթեզված ձևափոխությունը ողջ հարթությունն արտապատկերում է նրա N և F_2 կետերի պտույտով առաջացած օղակի վրա:

